



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. ապրիլին /վերլուծություն/

2009թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 11400 գործարքներ, որոնց քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 17.8%-ով, իսկ 2009թ. մարտի համեմատ աճել՝ 3.9%-ով:

2009թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3134 օտարման գործարքների 75.0%-ը կազմել են առուվաճառքները, 23.9%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. ապրիլին, 2009թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 8.0%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ նվազել՝ 35.3%-ով:

2009թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. ապրիլին, 2009թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.7%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ նվազել՝ 32.0%-ով:

2009թ. ապրիլին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2008թ.	ապրիլ 2009թ.	մարտ 2009թ.
Կենտրոն	471300	485100	515600
Արաբկիր	409900	366900	388400
Քանաքեռ-Զեյթուն	306800	289000	299100
Նոր-Նորք	270300	238600	258600
Ավան	268100	234600	256700
Էրեբունի	267000	250600	271500
Շենգավիթ	274200	252000	264700
Դավթաշեն	283200	265600	279200
Աջափնյակ	280000	249500	254700
Մալաթիա-Սեբաստիա	260300	232400	245100
Նուբարաշեն	151500	134700	154700
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>294800</b>	<b>272600</b>	<b>289800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. ապրիլին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. մարտի համեմատ նվազել են 5.9%-ով:

2009թ. ապրիլին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 211 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. մարտի համեմատ նվազել է 2.8%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ՝ 55.8%-ով:

2009թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2008թ.	ապրիլ 2009թ.	մարտ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	121500	130300	142300
	Ապարան	33000	43300	42300
	Թալին	42000	48800	49800
Արարատ	Արտաշատ	94300	88400	96800
	Մասիս	124500	131500	136500
	Վեդի	79100	90100	91100
	Արարատ	59400	84400	81500

Արմավիր	Վաղարշապատ	162500	171600	183200
	Արմավիր	115000	119800	127500
	Մեծամոր	76300	77500	85600
Գեղարքունիք	Սևան	85600	92100	101600
	Գավառ	44100	50600	56100
	Մարտունի	68200	80200	82200
	Վարդենիս	30500	33800	34800
	Ճամբարակ	15900	18500	17900
Լոռի	Վանաձոր	86200	86100	92800
	Ստեփանավան	45500	55000	56200
	Սյիստակ	60400	73000	74000
	Ալավերդի	29300	33100	36300
	Տաշիր	30500	37000	38100
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	12700	14000	14000
Կոտայք	Աբովյան	168800	141000	152700
	Նոր Հաճն	121300	141400	136500
	Բյուրեղավան	95700	102000	112600
	Եղվարդ	112000	125200	127800
	Հրազդան	65100	62600	60000
	Ծաղկաձոր	142600	182300	182300
	Զարենցավան	87000	81900	87900
Շիրակ	Գյումրի	92100	98900	103000
	Արթիկ	53600	60100	65800
	Մարալիկ	26400	31500	32700
Սյունիք	Գորիս	101000	125500	128500
	Կապան	86200	112300	107400
	Սիսիան	68400	92600	97900
	Մեղրի	45100	57100	58300
	Ագարակ	28900	34600	35400
	Քաջարան	46000	57000	58100
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	73300	74400	75800
	Եղեգնաձոր	95000	113400	115800
	Զերմուկ	123500	123300	128600
Տավուշ	Դիլիջան	86000	100400	103000
	Իջևան	115200	135400	148400
	Բերդ	37700	45000	46000
	Նոյեմբերյան	29900	35400	36100
	Այրում	21100	24000	24400

2009թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. մարտի համեմատ նվազել են 3.8%-ով

2009թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 273 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 46, մյուս մարզերում միասին վերցրած՝ 227: 2009թ. ապրիլին, 2009թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 3.8%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 14.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 8.6%-ով: 2008թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 49.6%-ով, ընդ որում Երևանում՝ 66.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 44.0%-ով:

2009թ. ապրիլին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2008թ.	ապրիլ 2009թ.	մարտ 2009թ.
Կենտրոն	489000	521200	540000
Արաբկիր	414700	415100	432700
Քանաքեռ Զեյթուն	312200	320700	332500
Նորք Մարաշ	278400	317500	327100
Ավան	272800	283500	299500
Էրեբունի	268600	294700	305900
Շենգավիթ	275600	285000	300000
Դավթաշեն	290900	314300	328700
Աջափնյակ	282800	285300	294300
Մալաթիա-Սեբաստիա	270900	273000	289800
Նուբարաշեն	157100	163300	175300
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>301200</b>	<b>315800</b>	<b>329600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. մարտի համեմատ նվազել են 4.2%-ով:

2009թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2008թ.	ապրիլ 2009թ.	մարտ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	124500	142600	152400
	Ապարան	35500	45400	43400
	Թալին	45000	52700	53900
Արարատ	Արտաշատ	99500	100700	107700
	Մասիս	128200	145300	153400
	Վեդի	85200	95800	95600
	Արարատ	64900	86700	84700
Արմավիր	Վաղարշապատ	164800	180200	187200
	Արմավիր	120600	127100	130900
Գեղարքունիք	Սևան	87800	103600	108600
	Գավառ	46200	59300	60300
	Մարտունի	70000	86500	84500
	Վարդենիս	32700	40400	40400
	Ճամբարակ	19800	23300	22300
	Վանաձոր	91400	100800	106800

Լողի	Ստեփանավան	51000	60100	59600
	Սպիտակ	65500	76500	75500
	Ալավերդի	31300	38800	39800
	Տաշիր	34000	41700	41200
	Թումանյան	9600	10400	10400
	Շամլուղ	6400	7400	7400
	Ախթալա	15800	18200	17200
Կոտայք	Արսիկ	172700	165900	178400
	Նոր Հաճն	124100	149500	146500
	Բյուրեղավան	97300	115500	122500
	Եղվարդ	115400	133600	136800
	Հրազդան	66700	74700	78300
	Ծաղկաձոր	217700	283000	281000
	Չարենցավան	88400	96200	101400
Շիրակ	Գյումրի	96600	118000	124200
	Արթիկ	57100	67600	70600
	Մարալիկ	30700	36200	35200
Սյունիք	Գորիս	103000	130400	134400
	Կապան	89600	117200	116400
	Միսիան	71100	99400	99400
	Մեղրի	48800	61400	60400
	Ագարակ	31800	37900	37400
	Դաստակերտ	10200	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	77100	83300	87500
	Եղեգնաձոր	98800	120900	120600
	Ջերմուկ	76000	110500	109500
Տավուշ	Դիլիջան	90700	112400	115900
	Իջևան	121800	149900	157000
	Բերդ	40200	48300	48100
	Նոյեմբերյան	35300	38500	38500
	Այրում	22800	25800	25800

2009թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. մարտի համեմատ նվազել են 2.2 % -ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1204 միավոր /599.71 հա/ հողեր, որից Երևանում՝ 50 միավոր /37.27 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 21 միավոր /3.58 հա/ հողեր, որից Երևանում՝ 9 միավոր /2.04 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 604 միավոր /483.93 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.81 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 437 միավոր /35.20 հա/, որից Երևանում՝ 30 միավոր /1.63 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 132 միավոր /10.28 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /2.03 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 15 միավոր /57.40 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /32.80 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 12 միավոր /10.61 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /2.30 հա/ :

2009թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1065 միավորի /543.78 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 44 միավոր /36.81 հա/, նվիրատվության գործարքներ՝ 125 միավորի /52.49 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.21 հա/ և փոխանակության գործարքներ՝ 14 միավորի /3.44 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.25 հա/:

Հանրապետությունում 2009թ. ապրիլին, 2008թ. ապրիլի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 39.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 28.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 47.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 44.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 119.25 հա, որից 110.10 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.5%-ը կամ 272 գործարքներ /190.36 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 10 գործարքներ /1.39 հա/, իսկ 73.9%-ը կամ 787 միավորը /349.54 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 34 միավոր /35.43 հա/:

2009թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք /3.88 հա/:

Ստորև ներկայացվում է 2009թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

ՆՈՒՏԱՆԻՑ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	4	0.07	6	1.32	5	0.81	2	32.80	23	1.41	4	0.42
Արագածոտն	3	4.63	0	0.00	1	0.002	2	0.16	55	28.26	0	0.00	36	2.62	2	0.02
Արարատ	2	2.02	2	1.08	2	0.15	12	0.18	72	27.61	2	0.01	46	4.36	3	0.07
Արմավիր	11	54.66	1	0.18	1	0.06	8	0.94	94	55.44	0	0.00	58	5.52	4	2.45
Գեղարքունիք	5	5.10	0	0.00	3	0.16	2	0.003	23	15.27	0	0.00	13	1.65	2	0.15
Լոռի	1	0.24	1	0.53	2	0.01	12	0.16	69	51.60	0	0.00	16	2.17	0	0.00
Կոտայք	13	40.62	5	1.27	80	4.14	16	0.72	60	43.67	0	0.00	56	4.83	6	1.03
Շիրակ	2	5.60	0	0.00	15	0.44	9	0.29	39	35.84	0	0.00	7	0.66	7	0.21
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.50	17	13.64	0	0.00	2	0.16	0	0.00
Վայոց Ձոր	20	35.51	1	21.50	0	0.00	6	0.35	13	6.31	0	0.00	8	0.77	4	0.18
Տավուշ	0	0.00	1	0.03	5	0.22	10	0.57	20	6.32	0	0.00	12	1.18	1	0.002
Ընդամենը	57	148.38	11	24.59	113	5.25	84	5.19	467	284.77	4	32.81	277	25.33	33	4.53

Ստորև ներկայացվում է 2009թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների

քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	10	1.39	0	0.00	4	0.07	6	1.32	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	4.79	3	4.63	0	0.00	1	0.002	2	0.16		
Արարատ	4	1.00	1	0.94	0	0.00	3	0.06	14	2.43	2	2.02	1	0.14	2	0.15	9	0.12		
Արմավիր	2	0.004	0	0.00	0	0.00	2	0.004	15	49.56	7	48.38	1	0.18	1	0.06	6	0.94		
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	5.26	5	5.10	0	0.00	3	0.16	2	0.003		
Լոռի	3	0.02	0	0.00	0	0.00	3	0.02	13	0.93	1	0.24	1	0.53	2	0.01	9	0.15		
Կոտայք	8	0.41	2	0.11	0	0.00	6	0.30	106	46.34	13	40.62	3	1.16	80	4.14	10	0.42		
Շիրակ	8	0.24	0	0.00	1	0.02	7	0.22	18	6.10	2	5.60	0	0.00	14	0.43	2	0.07		
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.50	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.50		
Վայոց Ձոր	2	0.19	0	0.00	0	0.00	2	0.19	25	57.17	20	35.51	1	21.50	0	0.00	4	0.16		
Տավուշ	6	0.08	1	0.03	2	0.04	3	0.01	10	0.74	0	0.00	0	0.00	3	0.18	7	0.56		
Ընդամենը	43	3.33	4	1.08	7	0.13	32	2.12	218	173.82	53	142.10	7	23.51	106	5.13	52	3.08		

Հանրապետությունում 2009թ. ապրիլին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /1.08 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. ապրիլին, 2008թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 53.8%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 18-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 52.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 53.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 33.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 73.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 30.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	4.63	35.4	62.3	45.3	38	9.10	365.0	12000.0	4178.9
Ապարան						7	7.02	86.5	2727.3	498.5

Թալին						8	9.13	93.6	5494.5	495.2
Ծաղկահովիտ						2	3.02	79.5	1000.0	224.2
Արարատի մարզ										
Արտաշատ						37	10.80	335.1	10833.3	2027.6
Մասիս	2	2.02	218.5	253.6	236.0	11	3.43	200.0	11904.8	2885.5
Վեդի						24	13.38	207.0	10795.1	1825.7
Արմավիրի մարզ										
Արմավիր						41	29.66	294.3	9090.0	1108.1
Բաղրամյան						6	6.09	90.6	2561.1	637.8
Վաղարշապատ	7	48.38	545.9	630.0	557.9	47	19.68	444.4	11764.7	2535.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	448.5
Ճամբարակ	2	3.00	989.0	989.0	989.0	8	6.45	60.5	953.3	220.0
Մարտունի						2	0.30	51.1	2850.0	541.7
Սևան	3	2.10	206.7	243.8	231.3	12	5.37	52.2	2134.8	215.9
Վարդենիս						1	3.15	41.2	2575.1	364.0
Լոռու մարզ										
Այվերդի						31	15.21	170.4	6424.2	1055.5
Գուգարք								234.6	6065.9	1068.8
Սյիտակ						1	0.22	250.0	5555.5	577.5
Ստեփանավան	1	0.24	1150.0	1150.0	1150.0	13	13.94	90.6	1686.6	410.2
Տաշիր						24	22.23	45.3	1384.4	215.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	6.32	86.0	263.3	183.2	38	26.50	279.3	11942.7	4865.6
Եղվարդ	4	3.30	77.6	448.7	212.8	17	14.07	174.4	11971.8	3371.0
Հրազդան	3	31.00	64.4	200.0	109.6	5	3.10	130.5	10256.4	1400.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.00	165.0	165.0	165.0	11	11.75	252.0	1693.1	472.5
Ամասիա	1	4.60	39.4	39.4	39.4	2	6.41	40.9	261.0	135.5
Անի						11	14.44	110.6	546.9	287.8
Աշոցք						1	1.00	58.5	215.8	126.3
Արթիկ						14	2.24	79.4	1428.6	214.5
Սյունիքի մարզ										
Գորիս						9	6.19	92.6	1023.2	435.8
Կապան						2	2.27	120.0	841.6	262.5
Մեղրի						1	0.32	193.0	3000.0	567.0
Սիսիան						5	4.86	46.3	1977.4	290.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.20	34.3	34.3	34.3	7	2.89	125.0	10000.0	1450.2
Վայք	19	35.31	52.6	192.9	71.8	6	3.42	58.8	1430.7	510.0
Տավուշի մարզ										
Բերդ						15	4.15	213.3	3783.8	472.5
Իջևան						3	0.61	267.5	9454.5	975.8
Նոյեմբերյան						2	1.56	46.7	7368.4	715.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		



			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	16.8	3928.6	3928.6	3928.6	27	20073.0	130.7	22200.0	2570.0
Ապարան						3	1114.0	124.1	609.6	238.0
Թալին						6	5052.0	63.2	1454.8	125.0
Ծաղկահովիտ								60.0	214.3	75.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	510.0	819.7	819.7	819.7	11	12217.0	173.9	7140.3	910.0
Մասիս	1	1000.0	558.0	558.0	558.0	20	14610.0	187.5	25000.0	1221.0
Վեդի						15	16724.0	126.1	5000.0	670.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	18328.0	131.6	9090.9	1213.7
Բաղրամյան						4	4900.0	100.0	833.3	165.8
Վաղարշապատ	1	600.0	3828.0	3828.0	3828.0	35	30686.0	197.4	26528.4	1537.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1200.0	186.6	1084.3	425.0
Ճամբարակ						1	500.0	71.3	2286.2	120.2
Մարտունի	1	410.0	113.4	113.4	113.4	8	12491.0	119.3	5000.0	272.8
Սևան	2	1200.0	372.6	447.3	409.9	2	1800.0	240.0	3110.4	195.0
Վարդենիս						1	470.0	72.5	987.2	142.5
Լոռու մարզ										
Ալավերդի	2	87.0	609.5	609.5	609.5	10	16190.0	114.3	1388.9	172.5
Գուգարք								77.9	14083.3	675.7
Սյիտակ						3	2950.0	104.9	1348.3	165.7
Ստեփանավան						3	2567.0	88.2	1666.7	132.8
Տաշիր								45.3	400.0	74.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	78	39089.4	2264.0	3643.3	3350.0	29	23671.0	264.5	35353.5	2062.6
Եղվարդ						22	19086.0	173.6	27000.0	2560.4
Հրազդան	2	2320.0	289.0	290.8	289.9	4	5011.0	117.7	34848.5	1350.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	2978.0	303.7	5000.0	2441.0	2	2030.0	113.6	18750.0	330.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	889.9	490.1	802.7	606.1	1	740.0	67.9	180.6	112.0
Աջոցք								40.8	144.0	59.1
Արթիկ	1	400.0	28.8	28.8	28.8	4	3810.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1561.0	112.2	1700.0	275.6
Կապան								67.9	2638.9	220.0
Մեղրի								68.5	632.9	139.0
Սիսիան								123.5	875.0	155.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						7	5380.0	96.7	7659.6	370.5
Վայք						1	2300.0	120.7	1448.3	144.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	3	1780.0	1495.0	1495.0	1495.0	11	10837.0	74.1	14423.1	479.7
Նոյեմբերյան						1	1000.0	125.0	1948.1	160.0

2009թ. ապրիլին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 8 գործարք 2.72 հա մակերեսով Շիրակի մարզում:

2009թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1372 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 87.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. ապրիլին 2009թ. մարտի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 18.0%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ՝ 21.7%-ով:

2009թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 81 բնակարանների, 66 անհատական բնակելի տների, 547 հասարակական, 68 արտադրական նշանակության օբյեկտների, 595 միավոր /2243.13 հա/ հողերի և 15 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 102 վարձակալության գործարքների /այդ թվում 6 միավոր՝ 0.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. մարտի համեմատ աճել է 4.1 անգամ, իսկ 2008թ. ապրիլի համեմատ՝ 2.0 անգամ: 2009թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 2243.13 հա հողերից 13.80 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2229.33 հա հողերի 0.23 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.29 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 918.76 հա, որից 918.51 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 725.61 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. ապրիլին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	33	116.46
Արարատ	4	701.34	16	217.17
Արմավիր	6	22.27	46	98.08
Գեղարքունիք	0	0.00	158	769.67
Լոռի	1	2.00	11	19.10
Վոտայք	0	0.00	7	5.66
Շիրակ	0	0.00	12	39.30
Սյունիք	0	0.00	67	208.62
Վայոց Ձոր	0	0.00	5	0.34
Տավուշ	0	0.00	1	21.00
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>725.61</b>	<b>356</b>	<b>1495.40</b>

2009թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 948 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.3%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. մարտի համեմատ նվազել է 6.4%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ՝ 62.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.7%/ , առանձնատների /21.4%/ , հասարակական նշանակության օբյեկտների /15.3%/ և հողերի /12.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 402 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. մարտի համեմատ նվազել է 9.5%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ՝ 61.4%-ով:

2009թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 126.62 հա հողեր, որից 2.24 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 95.5%-ը կամ 118.75 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 37.48 հա, որից 37.08 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. ապրիլին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 38 գործարքներ, որից 25-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 68.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.2%-ն՝ անհատական բնակելի տների, 2.6%-ը՝ այգետնակների, 7.9%-ը հասարակական նշանակության օբյեկտների, 5.3%-ը արտադրական նշանակության օբյեկտների և 2.6%-ը՝ ավտոտնակների նկատմամբ: 2009թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 5.6%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 19.4%-ով, մյուս մարզերում աճել՝ 2.6 անգամ, իսկ 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 87.2%-ով, ընդ որում Երևանում՝ 86.7%-ով, մյուս մարզերում՝ 88.2%-ով:

2009թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2009թ. մարտի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 44.4%-ով: 2009թ. ապրիլին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 2-ը՝ Շիրակի, 1-ական՝ Երևանում, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:

2009թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2214 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. մարտի համեմատ աճել է 23.0%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ նվազել՝ 2.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 19.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /29.5%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***